Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 07-06-2024 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ 40
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00137
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2003-06-24
1.5 ՀՎՀՀ-ն		01511187
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91438047
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		aua.am
1.8 Էլեկտրոնային փոստը		mmkrtchi@aua.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Հայաստանի ամերիկյան համալսարան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Բրյուս Մայքլ Բոդոսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	468	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Ուսանողական նպաստներ մագիստրատուրայի և բակալավրի ծրագրի ուսանողների ուսման վարձերի համար	133,310,800
	Ուսանողական կրթաթոշակներ մագիստրատուրայի ուսանողների համար	2,402,500
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	մշակել նոր ալգորիթմներ հիմնված մեքենայական ուսուցման և արհեստական ինտելեկտի վրա	24,000,000

	Խելացի և տվյալների վրա հիմնված համակարգերի զգաթնաժողով	318,750
	Բարելավված ջրային կառավարում Հայաստանում	18,394,945
	Կանաչ տաքսոմանիայի զարգացում Հայաստանում	7,700,211
	Հայաստանում և Վրաստանում տնային պայմաններում առանց ծխի մասշտաբային միջամտության իրականացում	1,304,088
	Հայաստան ԱՄՆ-ի համագործակցությունը քրոնիկ հիվանդությունների դեմ պայքարի նպատակով սոցիալական որոշիչ գործոնների գիտության ոլորտում կրթության միջոցով	2,627,552
	Ներածություն «Կանաչ տնտեսություն» ինքնավար ինտերակտիվ առցանց դասընթացին	16,697,175
	GIST ինովացիոն կենտրոն ծրագիր	965,550
	Ինտեգրված թվային համակարգ ծովային տվյալների և տեղեկատվական ծառայությունների համար	31,010,906
	Գիտական հետազոտություն ինտերակտիվ սեգմենտացիայի և մաթինգի տեխնիկական միջոցների վերաբերյալ	9,172,310
	Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն	290,021,134
	Համագործակցային տեխնոլոգիաներ և տվյալների գիտություն Խելացի քաղաքների հավելվածներում	2,074,965
	Աջակցություն կառավարելու կորոնավիրուսային հիվանդության և այլ վարակիչ հիվանդությունների բռնկումները Հայաստանում	453,117,126
	Բնագիտամաթեմաթիկական կրթություն հայ երիտասարդների համար	32,546,208
	Հիմնադրամի ծախսերը կատարելու համար ֆինանսական միջոցների աղբյուր	1,126,422,680
	Բնագիտամաթեմաթիկական կրթություն հայ երիտասարդների համար	81,563,961
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Անհատույց ստացված դրամական միջոցներ ֆիզիկական անձանցից, գրադարանային վճարներ, ուսանողական կացարանի վճարներ, քննությունների և թեստերի վճարներ	158,854,715
	Բարձրագույն կրթության ուսանողների ուսման վճարներ	2,814,218,182
	Հետբուհական կրթության ուսանողների ուսման վճարներ	497,768,985
	Անգլերենի և այլ դասընթացների մասնակիցներից վճարներ	315,705,769

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	1,454,708,498	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Բարձրագույն կրթություն	2,458,360,470	
Հետբուհական կրթություն	903,439,355	
Անգլերենի և այլ դասընթացներ	364,134,735	
Ժուռնալիստիկայի մագիստրոսի ծրագրի և գերազանցության կենտրոնի հիմնում	3,728,597	
Ալպյան լեռնային խոտի կառավարում	6,254,352	
Կանաչ տաքսոմոնիայի զարգացում Հայաստանում	19,597,337	
Ինտեգրված թվային համակարգ՝ ծովային տվյալների և տեղեկատվական ծառայությունների համար	37,668,748	
Բարելավված ջրային կառավարում Հայաստանում	19,170,590	
Ներածություն «Կանաչ տնտեսություն» ինքնավար ինտերակտիվ առցանց դասընթացին	22,252,844	
Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն	189,921,407	
Սոցիալական վերափոխում ջրային տնտեսության ոլորտում՝ «քաղաքացի գիտնականների» ներգրավվման միջոցով	14,166,605	
Հանրային քաղաքականություն, փորձագիտություն, վստահություն	4,635,400	
«ԿՈՊԵՐՆԻԿՈՒՍ» համակարգի միջոցով Սևծովյան ավազանում իրականացվող շրջակա միջավայրի մոնիտորինգ	796,775	
Կլոր սեղան քննարկումներ Հայաստանում էներգետիկ անվտանգության վերաբերյալ	1,247,304	
Բացահայտել Հայաստանում ալկոհոլի օգտագործումը և դրա հետ կապված վնասները նվազեցնելու կանխարգելիչ միջամտության հնարավորությունները	3,588,233	
ՀՀ սպառողների վստահության գնահատում	1,250,000	

Գինեգործության ուսումնասիրության համար	1,667,000
Անգլերեն ծրագիր ՋԼՄ-ների և PR մասնագետների համար	458,810
Պատրաստվեք նորարարության. Հայաստան	1,273,000
GIST ինովացիոն կենտրոն ծրագիր	665,339
Աջակցություն կառավարելու կորոնավիրուսային հիվանդության և այլ վարակիչ հիվանդությունների բռնկումները Հայաստանում	503,963,325
Հայաստանում և Վրաստանում տնային պայմաններում առանց ծխի մասշտաբային միջամտության իրականացում	17,622,376
Խելացի և տվյալների վրա հիմնված համակարգերի գազաթնաժողով	1,309,024
Բնագիտամաթեմաթիկական կրթություն խթանում հայ երիտասարդների համար	8,333,430
Բնագիտամաթեմաթիկական կրթություն հայ երիտասարդների համար	77,550,689
մշակել նոր ալգորիթմներ՝ հիմնված մեքենայական ուսուցման և արհեստական ինտելեկտի վրա	23,621,325
Հայաստան ԱՄՆ-ի համագործակցությունը քրոնիկ հիվանդությունների դեմ պայքարի նպատակով սոցիալական որոշիչ գործոնների գիտության ոլորտում կրթության միջոցով	10,959,469
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	6,949,209,000
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	4,697,636,539

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 10 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by KHEROLYANTS VARDUHI 7511690173
Date: 2024.09.26 11:46:38 AMT

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր

Grant Thornton

նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Նարինե Աճեմյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

30 մայիսի 2024թ.

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Հոգաբարձուների խորհրդի անդամների ցանկ

1. Լոուրենս Հ. Փիթս, բ.գ.դ., «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Կորպորացիայի հոգաբարձուների խորհրդի նախագահ, Կալիֆոռնիայի համալսարանի ակադեմիական հարցերի նախկին ռեկտոր և գործադիր փոխնախագահ, Կալիֆոռնիայի համալսարանի (Սան Ֆրանցիսկո) պատվավոր պրոֆեսոր, նյարդավիրաբուժություն

2. Ժաննա Անդրեասյան, ֆ.մ.գ.դ., Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար՝ նշանակված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

3. Սյուզի Միսիրյան Անտունյան, իրավագիտության դոկտոր, խորհրդատու, Հյուսիսային Կալիֆոռնիայի Համաշխարհային գործերի խորհրդի նախկին գլխավոր գործառնական տնօրեն

4. Արմեն Տեր-Կյուրեղյան, փիլիսոփայության դոկտոր, «Հայաստանի Ամերիկյան Համալսարանի» պատվավոր նախագահ, Թայսեի Քաղաքացիական ճարտարագիտության պատվավոր պրոֆեսոր, Կալիֆոռնիայի համալսարան, Բերքլի

5. Յուրի Սարգսյան, գ.թ., Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի նախկին ռեկտոր

6. Պերճ Սեդրակյան, իրավագիտության դոկտոր, «Դի Էլ Էյ Փայփեր» ընկերության գործընկեր, Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ

7. Վազգեն Լ. Յակուբյան, , «Լեոն Ա. Յակուբյան Քոնթրաքթինգ» ՍՊԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության անդամ, Տնօրենների կենտրոնական խորհրդի անդամ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	915,274	797,368
Ոչ նյութական ակտիվներ	5	9,550	15,051
Առնտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	43,280	74,129
		968,104	886,548
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	83,650	56,911
Առնտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	593,164	739,482
Ժամկետային ավանդներ	8	33,956	31,600
Մնացորդներ բանկերում	9	793,095	889,958
		1,503,865	1,717,951
Ընդամենը ակտիվներ		2,471,969	2,604,499
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	402,657	399,502
		402,657	399,502
Ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	11	1,127,033	908,805
Առնտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	425,031	480,225
Վարձակալության գծով պարտավորություններ		-	34,013
		1,552,064	1,423,043
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		517,248	781,954
		517,248	781,954
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		2,471,969	2,604,499

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. մայիսի 30-ին:

Բրյուս Մայքլ Ռոդրոպան
Նախագահ

Մնացական Մկրտչյան
Ֆինանսական ծառայությունների գծով տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներ			
Հասույթ կրթական ծառայություններից	13	3,900,938	3,698,552
Եկամուտ շնորհներից և նվիրատվություններից		2,172,991	2,070,760
Եկամուտ վարձակալությունից		565,386	555,911
Այլ եկամուտ		38,166	16,766
		6,677,481	6,341,989
Ծախսեր			
Ուսումնական ծախսեր	14	(4,748,545)	(4,438,018)
Վարչական և ընդհանուր ծախսեր	15	(1,716,888)	(1,538,014)
Այլ ծախսեր	16	(481,984)	(408,409)
Գործառնական գործունեությունից արդյունք		(269,936)	(42,452)
Ֆինանսական եկամուտ		4,795	4,645
Ֆինանսական ծախսեր		(1,792)	(4,882)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս,) զուտ	17	2,227	(132,724)
Վնաս մինչև հարկերը		(264,706)	(175,413)
Շահութահարկի գծով ծախս	18	-	-
Տարվա վնաս		(264,706)	(175,413)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(264,706)	(175,413)
Զուտ ակտիվները տարվա սկզբին		781,954	957,367
Զուտ ակտիվները տարվա վերջին		517,248	781,954

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	(264,706)	(175,413)
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	231,888	216,149
Հիմնական միջոցների օտարումից վնաս/(օգուտ)	(4,482)	3,143
Ֆինանսական եկամուտ	(4,795)	(4,645)
Ֆինանսական ծախս	1,792	4,882
Փոխարժեքային տարբերությունից վնաս/(օգուտ)	(2,227)	132,724
Գործառնական շահույթ/(վնաս) նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(42,530)	176,840
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	177,142	(260,682)
Պաշարների փոփոխություն	(26,739)	2,249
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(59,348)	130,571
Ակտիվներին վերաբերող շնորհների փոփոխություն	(59,514)	(60,297)
Հետաձգված եկամտի փոփոխություն	209,538	434,210
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	198,549	422,891

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(282,008)	(204,806)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	5,839	1,642
Բանկային ավանդների մարում	(2,356)	(2,106)
Ավանդներից տոկոսային եկամտի ստացում	4,795	4,645
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(273,730)	(200,625)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(35,805)	(32,550)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(35,805)	(32,550)
Բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(110,986)	189,716
Սառեցված դրամական միջոցների շարժ	2,311	17,206
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	14,123	(139,297)
Բանկերում մնացորդներ տարվա սկզբում	878,635	811,010
Բանկերում մնացորդներ տարվա վերջում	784,083	878,635

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 38-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամը (Հիմնադրամ) հանդիսանում է 1991թ. սեպտեմբերի 21-ի Հայաստանի Հանրապետության Մինիստրների խորհրդի # 570՝ «Հայ-ամերիկյան համատեղ համալսարանի հիմնադրման վերաբերյալ» որոշմամբ հիմնադրված «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» ՍՊԸ-ի իրավահաջորդը: «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» ՍՊԸ-ն հիմնադրվել էր Հայաստանի Հանրապետության կառավարության և «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Կորպորացիայի (ՀԱՀԿ) կողմից:

Հիմնադրամի նպատակն է տրամադրել ամերիկյան համակարգին և բարձրագույն կրթության չափանիշներին համապատասխան համալսարանական կրթություն, գիտական հետազոտություններ և հասարակական ծառայություններ: Կրթական հնարավորությունները հասանելի են ոչ միայն Հայաստանի, այլև արտասահմանյան ուսանողների համար: Հիմնադրամի նպատակն է պատրաստել այնպիսի շրջանավարտներ, որոնք կարևոր դեր կունենան Հայաստանի և տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացումներում:

Հիմնադրամը տրամադրում է բակալավրի աստիճան հետևյալ մասնագիտություններում. բիզնես, անգլերեն և հաղորդակցություն, քաղաքականություն և կառավարում, համակարգչային գիտություն, ճարտարագիտություն և տվյալների գիտություն, ինչպես նաև մագիստրոսի աստիճան հետևյալ մասնագիտություններում. բիզնեսի կառավարում, տնտեսագիտություն, ռազմավարական կառավարում, արդյունաբերական ճարտարագիտության և համակարգերի կառավարում, համակարգչային և տեղեկատվական գիտություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ, մարդու իրավունքներ և սոցիալական արդարություն, իրավունք, անգլերենի ուսուցում որպես օտար լեզու և հանրային առողջություն:

Իր գործունեության համար լրացուցիչ միջոցներ ձեռքբերելու նպատակով Հիմնադրամը վարձակալական հիմունքներով տրամադրում է իր կողմից վերահսկվող ազատ տարածքները տարբեր ընկերությունների:

Հիմնադրամը նաև ներգրավված է համայնքային զարգացման տարբեր ծրագրերում: Դրանցից խոշորը գյուղերի զարգացման Թուրփանջյան ծրագիրն է, որի նպատակն է աջակցել Հայաստանի գյուղերի բարելավված տնտեսական ակտիվությանը՝ մեծահասակների կրթության միջոցով:

Հիմնադրամը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40 հասցեում:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ. կազմել է 468 մարդ (2022թ.՝ 457 մարդ):

Գործարար միջավայր

Հիմնադրամն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք բնորոշ են զարգացող շուկաներին: Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական

համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը ենթակա են տարբեր մեկնաբանությունների, որոնք այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառացած մարտահրավերներին: Հայաստանի տնտեսության կայունությունն ու զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը վերահաստատել է իր հավատարմությունը լավ կառավարման սկզբունքներին, այդ թվում՝ հակակոռուպցիոն, թափանցիկության և հաշվետվողականության:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում սրվել է 2020թ. Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

Ուկրաինայում պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի նշանակալի առևտրային գործընկեր է, ուստի Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները, ինչպես նաև այդ պատժամիջոցների ուժգնացումը էական ազդեցություն են ունեցել Հայաստանի Հանրապետության տնտեսության և ֆինանսական շուկայի վրա:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Այդ հանգամանքը նպաստել է հայկական շուկա արտարժույթի ներհոսքի աճին, ինչը դրական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա, ինչի արդյունքում ընդհանուր առմամբ գրանցվել է երկնիշ աճ: Հիմնադրամի ղեկավարությունը հետևում է տնտեսական ընթացիկ իրավիճակը: Քանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ հուսալիորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը կարող է այն ունենալ Հիմնադրամի գործունեության վրա, քանի որ ընդհանուր տնտեսության վրա դրա ազդեցության աստիճանի վերաբերյալ առկա է անորոշություն:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 26.09.2024 10:58